«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ

ՀՀ, 375012, ք.Երևան, Բուզանդ 1/4, հեռ.՝54-17-89, «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510004597930100, ՀՎՀՀ 02504913

№ 68/211

« 04 » Մարտի 2025թ

«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝
Գ. ԵՍԱՅԱՆԻՆ
էլ. փոստ՝ ciacanmarket@gmail.com

Հարգելի պարոն Եսայան,

«Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի միջև 2024թ-ի դեկտեմբերի 26-ին կնքված N «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/1»-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր)

1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

1.2 կետի համաձայն՝ Մատակարարումն իրականացվում է Գնորդի կողմից տրված ապրանքի մատակարարման հայտի հիման վրա, Գնորդի կողմից պատվիրված քանակի չափով: Առաջին փուլի մատակարարման ժամկետը 20 օրացուցային օր է, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել կարճ ժամկետում: Հաջորդ փուլերում, մատակարարման ժամկետը՝ հայտը տալու օրվանից հաշված ոչ ուշ 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

Համաձայն 2025 թվականի հունվարի 30-ի թիվ N3/8 մատակարարման հայտի՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ներառյալ 19.02.2025թ-նը պետք է մատակարարեր N «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/1»-2 պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 4-րդ չափաբաժնով նախատեսված «Ձգալար չայրած» ապրանքատեսակի 1000(հազար)կգ և 28-րդ չափաբաժնով նախատեսված «Կլեմնիկ» ապրանքատեսակի 30000(երեսուն հազար) հատ խմբաքանակները:

Ի պատասխան «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի 2025թ-նի փետրվարի 12-ի դիմումի՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից 2025թ-ի փետրվարի 18-ի թիվ 68/154 գրությամբ, Պայմանագրի 4-րդ չափաբաժնով նախատեսված «Ձգալար չայրած» ապրանքատեսակի 1000(հազար)կգ և 28-րդ չափաբաժնով նախատեսված «Կլեմնիկ» ապրանքատեսակի

30000 (երեսուն հազար) հատ խմբաքանակների մատակարարման նոր ժամկետ է սահմանվել մինչև 03.03.2025թ-նը ներառյալ:

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից, սահմանված ժամկետում, այն է՝ մինչև 2025թ-ի մարտի 03-ը ներառյալ, Պայմանագրի 4-րդ չափաբաժնով նախատեսված «Ձգալար չայրած» ապրանքատեսակի 1000(հազար)կգ և 28-րդ չափաբաժնով նախատեսված «Կլեմնիկ» ապրանքատեսակի 30000(երեսուն հազար) հատ խմբաքանակները չեն մատակարարվել:

Տեղեկացնում ենք, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Ուստի, հիմք ընդունելով 2025թ-ի դեկտեմբերի 26-ին կնքված N «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/1»-2 Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 466-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ն 2025թ. մարտի 04-ից ամբողջությամբ և միակողմանի լուծում է N «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/1»-2 պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը Մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝

4-րդ չափաբաժնով նախատեսված «Ձգալար չայրած» ապրանքատեսակի մասով՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 1510004597930100 հաշվեհամարին փոխանցել՝

197(մեկ հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա դիմաց տույժ՝ N «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/1»-2 Պայմանագրի 6.2 կետի համաձայն, սկսած 20.02.2025թ-ից մինչև 03.03.2025թ-նը ներառյալ, թվով **8** աշխատանքային օրերի համար,

740(յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ տուգանք՝ N «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/1»-2 Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

157500(մեկ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովում,

236250(երկու հարյուր երեսունվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ որպես «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի որակավորման ապահովում.

28-րդ չափաբաժնով նախատեսված «Կլեմնիկ» ապրանքատեսակի մասով՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 1510004597930100 հաշվեհամարին փոխանցել՝

480(չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ որպես յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա դիմաց տույժ՝ N «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/1»-2 Պայմանագրի 6.2 կետի համաձայն, սկսած 20.02.2025թ-ից մինչև 03.03.2025թ-նը ներառյալ, թվով **8** աշխատանքային օրերի համար,

600(վեց հարյուր) ՀՀ դրամ տուգանք՝ N «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-25/1»-2 Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

135000(մեկ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ՝ որպես «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովում,

202500(երկու հարյուր երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի որակավորման ապահովում.

5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վճարումները չկատարելու դեպքում «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում, տուժանքի տեսքով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները և կից պահանջագրերը, տուժանքի համաձայնագրերը 1.4 կետի համաձայն կներկայացվեն «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին սպասարկող բանկին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից, ոչ ուշ, քան գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրացուցային օրվա ընթացքում, պայմանագրի կատարման ապահովման, որակավորման ապահովման և հաշվարկած տույժի և տուգանքի գումարները վճարելու դեպքում, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի նկատմամբ չի նախաձեռնվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ *Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ*

Կատարողներ Ա. Արաբյան,
Ա. Մինասյան
Հեռ. 010 54 39 80